**«Ապրիլիկ» ստուգատես**

*ուսումնասիրություն*

*«Ապրիլիկ» ծեսի նկարագրություն*

*Ծրագիրը հրապարակված է կայքում, պատասխանատու՝ Դպրոց-պարտեզ:*

*Մասնակցում էին կրտսեր դպրոցների 5-6 տարեկանների խմբերը դաստիարակի և դաստիարակի օգնականի հետ միասին. Դպրոց-պարտեզ, Նոր դպրոց, Գեղարվեստի դպրոց, Հիմնական դպրոց:*

*Մի քանի դիտարկում*

*Սովորողները հագնված էին ինչպես մյուս ամիսների ամսիկներին. իրենց դպրոցի համապատասխան մայկաները: Կար ծնողների մասնակցության և ակտիվության պակաս: Սովորողները նյութին լավ չէին տիրապետում:*

*Լաբորատորիայի մասնագետ՝ Լուսինե Ալեքսանյան*

Մարտի 29-ին էլեկտրոնային փոստով 6 տարեկանները տիկին Մարիետից ստացել են նամակ՝

*Սիրելիներ ջան, 6 տարեկանների ապրիլյան հաշվետվությունը ապրիլի 28-ն է,*
*կազմակերպիչ դասվարը՝ Արմինե Գյոնջյանը:*

«Ապրիլիկ» ծրագիրը հրապարակվել է կրթահամալիրի կայքում՝ ապրիլի 28-ին՝ Տաթև Բլեյանի կողմից:

*Բլոգների ապրիլ ամսվա գործունեության ուսումնասիրություն*

**Դպրոց-պարտեզ**

**Արմինե Գյոնջյանի բլոգ**

Ապրիլի 1-ին Արմինե Գյոնջյանի բլոգում հրապարակվել են աղայանական և ռոդարիական օրերի նախագծերը:

Շաբաթական նախագծերում (4-8, 11-15, ) նշված էին ծրագրում առկա ոտանավորները, նախագծի հեքիաթները:

Բլոգում հրապարակված են սովորողների հորինած հեքիաթները և Թարս հարցեր սուղիոնյութը:

**Գեղարվեստի կրտսեր դպրոց**

**Դիանա Գևորգյան, Կարինե Խառատյան**

Ապրիլի 28-ին հրապարակվել է Ապրիլիկի ծրագիրը:

Ապրիլի 13-ին հրապարակվել է աղայանական-ռոդարիական նախագիծը:

Շաբաթական նախագծերում (11 -15, 18-25) նշված էին ծրագրում առկա ոտանավորները, նախագծի հեքիաթները:

Հրապարակված են Ձեզ հետ թարսիկներն են ռադիոնյութն ու ընթերցարանային էջերը: Ընտանեկան նախագծերն են՝

- աղայանական գրական ընթերցումներ՝ Սիռնա Սիմիկյան
- Ճամփորդական պատումներ

**Նոր դպրոց, Աննա Ստեփանյանի բլոգ**

Ապրիլի 9-ին հրապարակվել է աղայանական-ռոդարիական օրեր նախագիծը:

Շաբաթական նախագծերում (4-8, 11-15, 18-25, 25-29) նշված էին ծրագրում առկա ոտանավորները, նախագծի հեքիաթները:

Հրապարակվել են Ռոդարիական թարս հարցեր, Աղայանի «Սազ» բանաստեղծությունը ռոդարիական հնարքով, Կատուներ ուտող մուկը նյութերը:

Ընտանեկան նախագծերն են՝

- Ինչ կլիներ, եթե
- Թարս հարցեր
- Ռոդարիական հեքիաթներ

**Հիմնական դպրոց**

**Սրբուհի Ներսիսյանի բլոգ**

Շաբաթական նախագծերում (4-8, 11-15, 26, 27) նշված էին ծրագրում առկա ոտանավորներն ու նախագծի հեքիաթները:

Հրապարակվել են Աղայան «Սազ», Թարս օր, ռոդարիական նոր կերպարներ, ռոդարիական մեղիանկարչություն նյութերը:

«Դպրոց-պարտեզ» ուսկենտրոնի բլոգում հրապարակված են բոլոր ամսիկների ծրագրերը:

*Լաբորատորիայի մասնագետ՝ Անահիտ Հարությունյան:*